



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2021 թվականի թիվ 99-Ա

ք. Երևան

«ՇԱՆԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմում-բողոքների հիման վրա 2021 թվականի ապրիլի 30-ին հարուցված թիվ 6 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2021 թվականի ապրիլի 30-ին Հանձնաժողով մուտքագրված «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմում-բողոքներում նշված է «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» և «Գովազդի մասին» օրենքների պահանջների խախտման փաստերի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից պարբերաբար խախտվում են «Տեսալսողական մեդիայի մասին» և «Գովազդի մասին» օրենքների պահանջները, մասնավորապես նշված են Հեռարձակողի կողմից իրականացված հետևյալ խախտումները.

- 2021 թվականի ապրիլի 23-ին, ժամը՝ 22:00-ին «Հորիզոն» լրատվական թողարկումն ընդմիջվել է 7 րոպե տևողությամբ գովազդով և նույն օրը, ժամը՝ 22:00-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից 13 րոպե հետո հեռարձակվել է վիճակախաղի գովազդ:

- 2021 թվականի ապրիլի 27-ին, ժամը՝ 22:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկումն ընդմիջվել է 5 րոպե տևողությամբ գովազդով և նույն օրը, ժամը՝ 22:00-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից 15 րոպե հետո հեռարձակվել է վիճակախաղի գովազդ, իսկ վիճակախաղի գովազդները (Վիվառո, Տոտո և Աջարաբեթ) մեկ ժամվա ընթացքում հեռարձակվել են երկու անգամից ավելի (3 անգամ):

- 2021 թվականի ապրիլի 28-ին, ժամը՝ 20:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկումը ժամը՝ 20:13-ին ընդմիջվել է 5 րոպե տևողությամբ գովազդով: Նույն օրը, ժամը՝ 22:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկումը ժամը՝ 22:14-ին ընդմիջվել է 5 րոպե տևողությամբ գովազդով և ժամը՝ 22:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից 11 րոպե հետո հեռարձակվել է վիճակախաղի գովազդ, իսկ վիճակախաղի

գովազդները (Վիվառո, Տոտո և Աջարաբեթ) մեկ ժամվա ընթացքում (ժամը՝ 23:00-24:00 ընկած ժամանակահատվածում) հեռարձակվել են երկու անգամից ավելի (3 անգամ)՝ ժամը՝ 23:04-ին, ժամը՝ 23:20-ին և ժամը՝ 23:54-ին:

- 2021 թվականի ապրիլի 29-ին, ժամը՝ 20:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկումը ժամը՝ 20:14-ին ընդմիջվել է 4 րոպե տևողությամբ գովազդով: Նույն օրը, ժամը՝ 22:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկումը ժամը՝ 22:17-ին ընդմիջվել է մոտ 6 րոպե տևողությամբ գովազդով և ժամը՝ 22:00-ի «Հորիզոն» լրատվական թողարկումից անմիջապես հետո, ժամը՝ 22:46-ին հեռարձակվել են վիճակախաղի գովազդներ, որից հետո հեռարձակվել է՝ Եվրոպայի լիգայի Մանչեստր Յունայթեդ-Ռոմա ֆուտբոլային խաղը և ժամը՝ 23:02-ին խաղի հովանավոր ներկայացվել է «Աջարաբեթ» վիճակախաղը:

Ընկերությունը դիմում-բողոքներով խնդրում է Հեռարձակողի նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառել՝ հետագայում խախտումները կանխելու նպատակով:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմում-բողոքները՝ 2021 թվականի ապրիլի 30-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի մայիսի 3-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցերի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում 2021 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողով մուտքագրված գրավոր բացատրությամբ Հեռարձակողը ծանուցման մեջ ներկայացված խախտումների վերաբերյալ հայտնում է, որ հեռարձակված եթերի ձայնագրությունների վերծանման արդյունքը հավաստում է այն մասին, որ 2021 թվականի ապրիլի 27-ին և ապրիլի 28-ին վիճակախաղերի գովազդը ծանուցման մեջ նշված 3 անգամի փոխարեն ցուցադրվել է 2 անգամ:

Հեռարձակողը պարզաբանում է նաև, որ 2021 թվականի ապրիլի 23-ին, ապրիլի 27-ին, ապրիլի 28-ին, և ապրիլի 29-ին, ժամը՝ 22:00-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ընթացքում գովազդի տեղադրումը չի հակասում «Գովազդի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին, իսկ նշվածի համար որպես հիմնավորում մատնանշում է, որ օրենքի վերոնշյալ դրույթը հստակ սահմանում է՝ արգելվում է գովազդային ընդհատումը պաշտոնային լրատվական հաղորդագրությունների ժամանակ:

Հեռարձակողն իր բացատրություններում նշում է, որ «Հորիզոն» լրատվական թողարկումը չի հանդիսանում պաշտոնային լրատվական հաղորդագրություն, քանի որ գործող օրենսդրությամբ «պաշտոնային լրատվական հաղորդագրություններ» հասկացության մեկնաբանությունը բառացիորեն վեր չի հանվել, իսկ Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 28-ի «Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 81-Ա որոշման

վերլուծությունը, մասնավորապես, հետևյալ ձևակերպումը, այն է՝ «Ռեզուլտային կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիաձևառություն մատուցողները պարտավոր են վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային յուրաքանչյուր եթերային ժամում տրամադրել առնվազն 5 (հինգ) րոպե եթերաժամանակ՝ պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար» նույնպես հավաստում է, որ «Հորիզոն» լրատվական թողարկումը չի կարող դիտարկվել որպես պաշտոնային լրատվական հաղորդագրություն:

Հեռարձակողը նշում է նաև, որ ՀՀ-ում գործող բացառապես լրատվական բնույթ կրող հեռուստածրագրերն իրենց ողջ եթերաժամանակի ընթացքում տեղադրում են գովազդ, հետևաբար, եթե իրականում ցանկացած լրատվական հաղորդման ընթացքում գովազդի տեղադրումը համարվեր իրավախախտում, առանց տարանջատելու պաշտոնական հաղորդագրությունների՝ գովազդով ընդհատման արգելքը, ապա վերջիններս իրենց գործունեության ողջ ընթացքում անընդմեջ պատասխանատվության կենթարկվեին:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս դիտարկվել է Հեռարձակողի կողմից ներկայացված 2021 թվականի ապրիլի 23-ի, ապրիլի 27-ի, ապրիլի 28-ի և ապրիլի 29-ի եթերի ձայնագրությունները և դիտարկման արդյունքում 2021 թվականի մայիսի 25-ին արձանագրվել է, որ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջի խախտումներ, մասնավորապես.

-2021 թվականի ապրիլի 23-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից (սկիզբը ժամը՝ 22:01:04-ին, ավարտը ժամը՝ 22:42:52-ին) 7 րոպե 49 վայրկյան անց եթեր է հեռարձակվել՝

«Վիվարո» վիճակախաղի կազմակերպչի «Popok» (ժամը՝ 22:50:41-ից մինչև ժամը՝ 22:50:54-ն ընկած ժամանակահատվածում) և «Crash» (ժամը՝ 22:50:55-ից մինչև ժամը՝ 22:51:10-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Տոտոգեյմինգ» վիճակախաղի կազմակերպչի «Փողոտ արկածներ» (ժամը՝ 22:51:29-ից մինչև ժամը՝ 22:51:45-ն ընկած ժամանակահատվածում) և «Դաբլ Դուբլ» (ժամը՝ 22:51:46-ից մինչև ժամը՝ 22:51:58-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Աջարաբեթ» վիճակախաղի կազմակերպչի «Ասում են մեկը երկուս չի դառնում» (ժամը՝ 22:53:25-ից մինչև ժամը՝ 22:53:42-ն ընկած ժամանակահատվածում) և «Հեթ-Տրիկ» (ժամը՝ 22:56:41-ից մինչև ժամը՝ 22:56:59-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները:

-2021 թվականի ապրիլի 27-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից (սկիզբը ժամը՝ 22:00:04-ին, ավարտը ժամը՝ 22:40:39-ին) 11 րոպե 14 վայրկյան անց եթեր է հեռարձակվել՝

«Վիվարո» վիճակախաղի կազմակերպչի «Սա սպորտանա» (ժամը՝ 22:50:55-ից մինչև ժամը՝ 22:51:10-ն ընկած ժամանակահատվածում) և «Հաջող ակ» (ժամը՝ 22:51:53-ից մինչև ժամը՝ 22:52:08-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Տոս ոգեյմինգ» վիճակախաղի կազմակերպչի «Փողոտ արկածներ» (ժամը՝ 22:52:54-ից մինչև ժամը՝ 22:53:08-ն ընկած ժամանակահատվածում) և «Դաբլ Դուբլ» (ժամը՝ 22:53:09-ից մինչև ժամը՝ 22:53:23-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Աջարաբեթ» վիճակախաղի կազմակերպչի «Ասում են մեկը երկուս չի դառնում» (ժամը՝ 22:56:26-ից մինչև ժամը՝ 22:56:42-ն ընկած ժամանակահատվածում) և «Հեթ-Տրիկ» (ժամը՝ 22:56:43-ից մինչև ժամը՝ 22:56:54-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները:

-2021 թվականի ապրիլի 28-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից (սկիզբը ժամը՝ 22:00:49-ին, ավարտը ժամը՝ 22:38:51-ին) 10 րոպե 53 վայրկյան անց եթեր է հեռարձակվել՝

«Վիվարո» վիճակախաղի կազմակերպչի «Հաջող ակ» (ժամը՝ 22:49:44-ից մինչև ժամը՝ 22:50:00-ն ընկած ժամանակահատվածում) և «Սա սպորտանա» (ժամը՝ 22:50:01-ից մինչև ժամը՝ 22:50:13-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Տոսոգեյմինգ» վիճակախաղի կազմակերպչի «Փողոտ արկածներ» (ժամը՝ 22:50:44-ից մինչև ժամը՝ 22:50:59-ն ընկած ժամանակահատվածում) և «Դաբլ Դուբլ» (ժամը՝ 22:51:00-ից մինչև ժամը՝ 22:51:15-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Աջարաբեթ» վիճակախաղի կազմակերպչի «Ասում են մեկը երկուս չի դառնում» (ժամը՝ 22:52:59-ից մինչև ժամը՝ 22:53:18-ն ընկած ժամանակահատվածում) և «Հեթ-Տրիկ» (ժամը՝ 22:53:20-ից մինչև ժամը՝ 22:53:31-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները:

-2021 թվականի ապրիլի 29-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից (սկիզբը ժամը՝ 22:00:53-ին, ավարտը ժամը՝ 22:46:53-ին) 9 վայրկյան անց եթեր է հեռարձակվել՝

«Վիվարո» վիճակախաղի կազմակերպչի «Popok» (ժամը՝ 22:47:02-ից մինչև ժամը՝ 22:47:14-ն ընկած ժամանակահատվածում) և «Crash» (ժամը՝ 22:47:15-ից մինչև ժամը՝ 22:47:32-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Տոսոգեյմինգ» վիճակախաղի կազմակերպչի «Փողոտ արկածներ» (ժամը՝ 22:48:03-ից մինչև ժամը՝ 22:48:10-ն ընկած ժամանակահատվածում) և «Դաբլ Դուբլ» (ժամը՝ 22:48:11-ից մինչև ժամը՝ 22:48:32-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Աջարաբեթ» վիճակախաղի կազմակերպչի «Ասում են մեկը երկուս չի դառնում» (ժամը՝ 22:50:17-ից մինչև ժամը՝ 22:50:35-ն ընկած ժամանակահատվածում) և «Հեթ-

Տրիկ» (ժամը՝ 22:50:36-ից մինչև ժամը՝ 22:50:48-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները:

2021 թվականի ապրիլի 29-ին «Հորիզոն» լրատվական թողարկման ավարտից (սկիզբը ժամը՝ 22:00:53-ին, ավարտը ժամը՝ 22:46:53-ին) 13 րոպե 7 վայրկյան անց եթեր է հեռարձակվել՝ Եվրոպայի լիգայի Մանչեստեր Յունայթեդ-Ռեմա ֆուտբոլային խաղը (ժամը՝ 23:00-ից մինչև 23:45-ն ընկած ժամանակահատվածում), որի ընթացքում որպես խաղի ցուցադրման հովանավոր ժամը՝ 23:02:00-ից մինչև ժամը՝ 23:02:18-ն ընկած ժամանակահատվածում ներկայացվել է «Աջարաբեթ» վիճակախաղի կազմակերպչի և նրա կողմից սահմանված բուքմեյքերական գործակիցների վերաբերյալ տեղեկատվությունը:

Նշված արաքները համապատասխանում են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Ընկերության դիմում-բողոքներում նշված փաստերն ուսումնասիրելու նպատակով իրականացված դիտարկման արդյունքում արձանագրվել է նաև, որ 2021 թվականի ապրիլի 27-ին Հեռարձակողի կողմից վիճակախաղերի գովազդների հեռարձակման ժամանակ պահպանվել են «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջը, այն է՝ յուրաքանչյուր հեռուստահաղորդակցության ակիքով հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի գովազդը թույլատրվում է ժամը 22:00-07:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ ռադիոյով՝ ժամը 08:00-20:00-ն ընկած ժամանակահատվածում: Գովազդը չի թույլատրվում մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հաջորդող մեկ ժամվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում գովազդի ընդհանուր տևողությունը, այդ թվում՝ գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին, չի կարող գերազանցել 3 րոպեն, որը մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի, և ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 60 վայրկյանը:

Ըստ արձանագրության՝ 2021 թվականի ապրիլի 28-ին ժամը՝ 23:00-ից մինչև ժամը՝ 24:00-ն ընկած ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել՝

«Վիվարո» վիճակախաղի կազմակերպչի «Popok» (ժամը՝ 23:21:24-ից մինչև ժամը՝ 23:21:37-ն ընկած ժամանակահատվածում), «Crash» (ժամը՝ 23:21:38-ից մինչև ժամը՝ 23:21:55-ն ընկած ժամանակահատվածում), «Հաջող ակ» (ժամը՝ 23:58:21-ից մինչև ժամը՝ 23:58:35-ն ընկած ժամանակահատվածում) և «Սա սպորտանա» (ժամը՝ 23:58:36-ից մինչև ժամը՝ 23:58:51-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Տոտոգեյմինգ» վիճակախաղի կազմակերպչի «Փողոտ արկածներ» (ժամը՝ 23:05:19-ից մինչև ժամը՝ 23:05:33-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև ժամը՝ 23:25:06-ից մինչև ժամը՝ 23:25:21-ն ընկած ժամանակահատվածում), «Օղից բոնուս» (ժամը՝ 23:05:34-ից մինչև ժամը՝ 23:05:48-ն ընկած ժամանակահատվածում) և «Freebet-Tribet» (ժամը՝ 23:25:22-ից մինչև ժամը՝ 23:25:35-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները.

«Աջարաբեր» վիճակախաղի կազմակերպչի «Ասում են մեկը երկուս չի դառնում» (ժամը՝ 23:08:32-ից մինչև ժամը՝ 23:08:50-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև ժամը՝ 23:55:06-ից մինչև ժամը՝ 23:55:24-ն ընկած ժամանակահատվածում) և «Հեր-Տրիկ» (ժամը՝ 23:08:51-ից մինչև ժամը՝ 23:09:01-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև ժամը՝ 23:55:25-ից մինչև ժամը՝ 23:55:37-ն ընկած ժամանակահատվածում) վիճակախաղերի գովազդները: Նշված վիճակախաղերի գովազդները ևս հեռարձակվել են՝ պահպանելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջը:

Ինչ վերաբերում է դիմում-բողոքներում ներկայացված այլ փաստերին, ապա նշենք, որ Հանձնաժողովը խախտումներ չի արձանագրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է Օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ արգելվում է վիճակախաղի գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո:

«Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է:

Հանձնաժողովն ամրագրում է, որ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները գովազդ հեռարձակելիս պարտավոր են պահպանել Օրենքով և «Գովազդի մասին» օրենքով գովազդի առանձնահատկությունները սահմանող դրույթները և ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները սահմանող «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-

րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո արգելվում է վիճակախաղի գովազդումը:

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Շանթ» տեսալսողական ծրագրի եթերում 2021 թվականի ապրիլի 23-ին, ապրիլի 27-ին, ապրիլի 28-ին և ապրիլի 29-ին պարբերաբար «Հորիզոն» լրատվական թողարկումից հետո՝ օրենքով արգելված ժամանակահատվածում, հեռարձակվել է «Վիվարո», «Տոտոգեյմինգ» և «Աջարաբեթ» վիճակախաղերի գովազդ:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ «Գովազդի մասին» օրենքով տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար վիճակախաղի գովազդն արգելող դրույթ է սահմանված՝ մասնավորապես՝ արգելվում է վիճակախաղի գովազդը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո, սակայն Հեռարձակողի կողմից չեն պահպանվել «Գովազդի մասին» օրենքով ամրագրված վիճակախաղի գովազդի հեռարձակման սահմանափակումները՝ դրանով իսկ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Հանձնաժողովն ամրագրում է նաև, որ Հեռարձակողն իր բացատրություններում չի անդրադարձել և որևէ պարզաբանում չի ներկայացրել խնդրո առարկա հանդիսացող վիճակախաղերի գովազդի այն խախտումների վերաբերյալ, որն արգելված է «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասով և փաստենք, որ այս հարցի վերաբերյալ Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները և պարզաբանումները հիմնավոր և բավարար չեն, քանի որ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն վիճակախաղի գովազդումն արգելվում է լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո, իսկ տվյալ դեպքում «Հորիզոն» լրատվական թողարկումից հետո՝ օրենքով արգելված ժամանակահատվածում, հեռարձակվել է «Վիվարո», «Տոտոգեյմինգ» և «Աջարաբեթ» վիճակախաղերի գովազդ: Նշված հանգամանքը փաստում է, որ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել իրավախախտում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների ներկայացված փաստերը և պարզաբանումները, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ և արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը հանդիսանում է տեսալսողական մեդիածառայություն մատուցող, որը հեռարձակում է տեսալսողական հաղորդումներ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող

օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքով արգելված արարքի կատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված մնացած ենթադրյալ խախտումներին, Հանձնաժողովը փաստում է, որ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում այդ փաստերի կապակցությամբ խախտում չի արձանագրվել:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Իսկ Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմնին իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ

կետով, «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասով, 24-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

11 հունիսի 2021թ.

ք. Երևան